




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամէն լեղումով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսում հրատարակ-
վող մի նոր գիտական ամսագիր. Անաստասի
հրատարակչի պատճառները. Հասարակաց գրա-
դարանի հարցը Երևանում. Ժողովուրդը և քահանա-
ներ. Նամակ Ալեքսանդրապօլից. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համոզմունքից զուրկ
գործիչներ. Եւրոպական մամուլը և գերմանական
կայսրը. Նամակ Թիֆլիսից. Սրտաբեր լուրեր.
—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ՄԻ ՆՈՐ ԳԻՏՆԱ-
ԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Ստացանք Կ. Պօլսից այդտեղ լոյս տեսած
«Ներքին Տեսութիւն» ամսագրի համարը: Ամա-
գրի տնօրէն մի ինչ որ պարոն Պ. Ատրուսի է:
Սոք առաջին տեսութիւնը ըստմանով ըստ
հետեւեալն է. 1) Յայտարարութիւն, 2) Հայինք
առ Աստուած (բանաստեղծութիւն, որից ոչինչ
չէ կարելի հասկանալ, որ զուրկ է թէ մտքից և
թէ բանաստեղծական չափերից), 3) Յայն և Ան-
յոստութիւն (մտք և անիմաստ քարոզի պէս մի
բան), 4) Միջնորդ, ոչ և իւր կերպարանաւոր-
ութիւնը (քնադատական, տեղ տեղ լաւ, տեղ
տեղ մոլոր գրված), 5) Գլխաւոր հոսանքներ (բը-
նագիտական), 6) Այլ և այլ: Այդ մասը ամե-
նահետաքրքիրն է և այդ բաժնում հաղորդած մի
տեղեկութիւն մանաւանդ կարող է համարվել մի
նոր և քանակի, թէ և անհաւատալի գիւտ, որը չը
գիտենք ուր յատկացնենք, —գերմանական գիտնա-
կաններին, թէ «Ներքին» տնօրէն, պ. Ատրու-
սին Ահա այդ գիւտը. «Հին կապերտներէ պատ-
րաստված շաքար: Քանի մի տարի առաջ պ. Բիբ-
բէր հին չափերէն շաքար պատրաստելու ձեռ-
նարկելով մեծ ազդեցութիւն առաջ բերաւ Այժմ
ի Գերմանիա շաքարն հնոտիներէ կը շինեն, զա-
նոնք ծծումքի թիւոյ ազդեցութեամբ աջետի
վերածելով, աջետն ալ ջրախառն կրի հետ կը
խառնեն, որ դարձեալ ծծումքի թիւոյ միջոցաւ
քաղցրանալով կը փոխվի: Այս կերպով պատ-
րաստված քաղցրանալով առևտուր մէջ գործա-
ծուածին նման է և նոյն եղանակաւ շաքարեղէն-
ներ, պաղպաղակներ և այլն շինելու կրնայ գոր-
ծածվի: Եւստ հրաշալի գիւտն է Զարմանում ենք
որ պ. Ատրուսի փոխնախկին «Ներքին» հրատա-
րակչու, ձեռնամուկն չէ լինում իր տանը եղած
հին կապերտներից և իրան մօտ գտնվող հնոտի-
ներից ու հին չափերէն շաքար, քաղցրե-
ղէններ և պաղպաղակներ պատրաստելու...
Դա աւելի շահաւէտ կը լինէր, քան թէ ամ-
սագիր հրատարակելու: Սակայն պ. Ատրուսի
չա՛հ չէ որոնում գրականութեան մէջ: Ահա
նրա նշանաւոր խօսքերը որ գտնում ենք
նրա յայտարարութեան մէջ: «Բազում ձեռ-
նարկներ եղած են մեր մամուլին ձոխացնելու,
որոցմէ այժմ այն ինչ մի քանին (ինչ լեզու է)
կանգուն կը մնան» գործելով ազգային, քաղաքա-
կան և գիտական ըզրի ներքն լոյս ի խնդրի
շահու. և ի յազուրդ անձնական կրկն. այս է ար-
դեօք մամուլը կոչումն (ինչ անձնակատարութիւն):
Մամուլն պէտք է լինել (?) ազատ ամեն ազդե-
ցութիւնէ (չառ ուղիղ է) ունենալով նշանաբան
ժողովրդեան օգուտին և խնդր: Ահա այս զրօյն
ներքն և մենք պիտի ջանանք գործել (չառ ու-
րախ ենք) ցորչալի ներքն մեր հանդիսին անձուկ
էջին, զորս պիտի յատկացնենք լոյս գրական,
գիտական և ուսումնական տեսութեանց»

Եթէ «Ներքին» ուսումնական կամ գիտնա-
կան տեսութիւնները վերե յիշվածի նման կը
լինեն թէ հին չափերէն, հնոտիներից և փը-
տած կապերտներից կարելի է շաքար, քաղցրե-
ղէններ, կոնֆէտներ և պաղպաղակներ պատրաս-
տել, —մեզ կը մնայ չնորհաւորել պ. Ատրուսին

և կատարեալ վստահութեամբ մարդկայնաւ
նմա կատարեալ աշողութիւն իր յանձն առած
«օգուտէտ», «ազգօգուտ» և «անշահաւէր» ձեռ-
նարկութեան վերաբերմամբ:

ԱՆՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՐՆԵՐԸ

Գիւղացին եթէ ապրում է, դրանով նա պար-
տական է իր ընտանի անասուններին. որովհե-
տե երկրագործութեան համար անհրաժեշտ են
եղն ու գոմէշը, առանց դրանց գիւղացին չէ կա-
րող մի թիղաչափ հող վարել, մանաւանդ այժմ,
քանի որ նոր սխտեմայի գոլթանը, որին սով-
բաբար լծում են ձիեր, չէ ընդհանրացած:

Գիւղացու ընտանիքը մեծ մասամբ կերակր-
վում է ընտանի կենդանիների տուած ուտելիքնե-
րով: Կաթով, մածնով, կարագով և այլն, որոնց
ընդհանուր խօսքով «թացան» անուն են տալիս:
Պատ օրերին գիւղացու ընտանիքը «եօլայ» է դը-
նում ցամաք հաց կամ շառ-շառ մի քանի թիւո-
կամ աղ դրած բանջարներով, իսկ ուտի օրերին
ինչպէս ասեցի, թացանով: Հեշտ է երևակայել,
թէ ինչ վիճակի մէջ կը լինի այն ընտանիքը, որը
զրկված է իր միակ սննդաբար կերակուրից—թացա-
նից. եթէ չը կայ վերջինս, ուրեմն նա տարին տաս
երկու ամիս ցամաք հացով և բանջարով պէտք
ապրի. բայց միայն օւլայ պարենակով ըստե-
ղէն կերակուրը չը կարողանալով բաւարար սնունդ
մատակարարել, հետեւեալ նրա մարմնակազմը
կը քայքայվի և կառավարանայ վաղահաս ծերու-
թիւն կամ մահ:

Ասածներէս երևում է, որ ընտանի անասունը
գիւղացուն կենքը տուողն է, հետեւաբար շառ ա-
ւելի խնամքով և զգուշութեամբ պէտք է պահ-
պանել նրան, որպէս զի գիւղացին չը զրկվի նը-
րանից: Բայց ընդհանրապէս գիւղացու շառ ան-
տարբեր են դէպի այն պայմանները, որոնք կա-
րող էին ընտանի անասուններին առողջ պահել
և ոչնչացնել մասամբ այն տարախոյսի հիւան-
դութիւնները, որոնք շառ անգամ զրկում են ամ-
բողջ գիւղի ընտանիքներին իրանց միակ յոյս ու
ապակն ընտանի կենդանիներից: Նկատված է
որ անասունների մէջ հիւանդութիւններ տեղի
են ունենում զվաւրաբար ձմեռվայ վերջերս
և գարնան սկզբներում: Սրա պատճառն ինքն
ըստ ինքեան հասկանալի կը լինի, եթէ մենք ու-
շադրութիւն դարձնենք այն գոմերի վրա, ուր
ամբողջ ձմեռը ընտանի կենդանիները փակված
մնում են: Երևակայեցէ՛ք ձեզ 6 քառակուսի սա-
ռէն բակից բաւական ցածր յատակ ունեցող մի
տեղ, որը շուրջը բարձրանում են ոչ աւելի քան
2 1/2 կամ 3 արշին բարձրութեամբ պատեր, սրանց
վրա ձգված են ծուռ ու մուռ գերաններ, ինչպէս
պատահել է, ապա բարակ եղեգն, իսկ սրա վրա
հող. տանիքի մէջտեղից լինում է փողբիկ, հաղի-
կէս արշին տրամագիծ ունեցող երթիկ, իսկ պա-
տերի մէջ լինում է շառ փողբ մի լուսամուտ
խորտած թուղթ վրան կայքած, կամ բոլորովին
լուսամուտ չէ լինում: Ահա, գոմը պատրաստ է,
այսպիսի մի տեղում կապում են 5—6, երբեմն
10 «սեւաստաւոր»: Անասունները այս տեսակ գո-
մերի մէջ քնում, կանգնում, կերակրվում են մին-
չ և ձմեռվայ անցնելը: Մի անգամ օրամէջ կին-
դանիների տեղը մաքրում են: Եթէ պատահի ձեռ-
գոմի դուռը բանալ և ներս մտնել, մէկ րօպէ
չէք կարող մնալ այն ապականված օդի մէջ: Այս
գործը հաստատութեան, ապականված օդի մէջ անա-
սունները ապրում են 2—3 ամիս, նայելով ձը-
մեռվայ խտութեանը ու երկարութեանը: Ապա-
կանված ու ներքած օդի մէջ մնալուց առաջա-
նում է թուլութիւն, հիւանդութիւն: Եթէ միւս
անպատշաճ միջոցներ մի կողմ թողնենք, այս տե-
սակ գոմերի անմաքրութիւնն ու ապականված
օդը հերիք է տարափոխել հիւանդութիւններ
հիւանդութեան համար:

Անցնելու տարի իզդիրում և նրա չբակալածում
երեքեաւ «ազար» կոչված տարափոխիկ հիւան-

դութիւնը, որից շառ անասուններ կոտորվեցան:
Մէկ պարոն Ղ. ազգանունով պատմում էր թէ
չը նայելով, որ ինքն 20—30 տաւար էր պա-
հում, բայց բոլորն էլ անվտանգ մնացին. և ինքն
իր սեփական փորձով համոզված բացատրում էր
թէ իր անասունների առողջ մնալու գլխաւոր,
կը մաքրել և մեծ լուսամուտներով էր: Մենք
չառ ուրախացանք, որ այդ պարոնը անասուննե-
րին առողջ պահելու համար ֆիզիոլոգիական այդ
մէկ պայմանը ճշգրտութեամբ է ըմբռնել: Եթէ բը-
նագիտութիւնն եկած է այն եղբակացութեան
որ իւրաքանչիւր չնչաւոր կենդանու արիւնը մա-
քրվելու համար հարկաւոր է մաքուր օդով չնչա-
ւութիւն, ուրեմն պարզ է, որ մեր այժմեան գո-
մերը շառ միտաստեալ են անասունների համար,
պէտք է նրանց բարեփոխել: Այս երևոյթի վրա
հրաշքում եմ մեր գիւղական երիտասարդների
ուշադրութիւնը, այն երիտասարդներին, որոնք
նոյն իսկ դպրոցում իրանց ուսուցչից բնագիտու-
թիւն սովորելիս լսել են՝ որ առողջ լինելու հա-
մար հարկաւոր է մաքուր օդ և առատ լոյս:

Բ.

ՀԱՍՏԱՐԱԿՈՅ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՀԱՅՔԸ ԵՐԵՒԱՆԻՄ

Երևանի առօրեայ և ամենակարևոր հարցերի
թուումն է և հասարակաց գրադարանի խնդիրը:
Երևանում ընթերցանութեան աներակալակցի պա-
հանք է զգացվում, ամեն կողմից գիրք են ու-
ղում, ամեն կողմից գանգատ է լսվում, որ Երե-
ւանում գիրք ձարելը անկարելի է և իսկապէս
հրտեղից ձարել, եթէ մի հասարակաց գրադարան
չը կայ: Արդէն այս հարցը մի քանի անգամ ևս
«Մշակուած» յարուցված է, բայց դա միշտ մը-
նացել է «Չայն բարբառոյ յանապատին»: Երե-
ւանցին միշտ կարգացել է այդ նիւթի վրա զըր-
ւած թղթակցութիւնները և նամակները ու ա-
կանջի ետէն է ձգել: Բայց մինչև երբ պէտք է
սպասել, ականջի ետև ձգելով բան չի դուրս
գալ, պէտք է աշխատել որքան կարելի է շուտա-
փոյթ իրագործել այդ հարցը: Դա մի կենսական
ամենանշանակալից հարց է Երևանի համար: Ու-
սակ հարցերը իսկին իրագործումն են ստանում:
Օտար երկրներում ամեն միջոց գործ են դնում
ժողովուրդի մէջ ընթերցանութիւնը տարածելու
զրա համար ահապին գումարներ են միտում, զը-
րադարաններ են հիմնում, զանազան գրականա-
կան երեկոյթներ են կազմում, լրագրիներ են հը-
րատարակում, բայց Երևանում միանգամայն հա-
կաւալն են անում—այն է ընթերցանութիւնը
միտումն են իր նոյն իսկ դեռ մանկական հա-
սակում:

Յիշելով, Երևանում կան գրադարաններ, բայց
այդ գրադարանները թէ աղքատ են և թէ հա-
սարակութեանը մատչելի չեն: Այդ գրադարան-
ների թիւը 3 է—Կլուբինը, թեմական դպրոցինը
և արքեպիսկոպոսի դպրոցինը: Բացի այն, որ վերո-
յիշեալ գրադարանները վերապահված են որոշ
գաւառագրերի, պէտք է ի նկատի ունենալ, որ
նոյն իսկ այն անձինք, որոնք կարող են օգտվել
որի առաջ բաց են գիմնադրայի գրադարանի
գումարը, հայերէն գրքեր չէ կարող ձարել, իսկ
թեմական դպրոցի աշակերտը ուսմանը չէ կա-
րող ձարել, այն ինչ կուրի գրադարանից օգու-
տիւն համար հարկաւոր է կամ անգամ լինել և
կամ անգամներ մի ծանօթ ունենալ:

Երբեմն երեւմ յայտնվել են մասնաւոր ան-
ձինք, որոնք սկսել են զրքեր բաժանել կարդալու
համար, բայց զրքեր շատ էլ երկար չեն տեղ
զանազան պատճառներով:

Բնականաբար հասարակաց գրադարանի հար-
ցով մասնաւորապէս պէտք է զբաղվի Երևանի
բարձրագոյն խորհուրդը, բայց նա այդ հարցը,
ինչպէս և նոյնանման շատ հարցեր, բարձի թողի

է արեւ: Ուրեմն ինչպէս պէտք է անել, այսպէս
թէ այնպէս Երևանում անհրաժեշտ է, որ մի հա-
սարակաց գրադարան հիմնվի, որտեղ ամեն մարդ
ազատ մուտք ունենայ:

Մնում է միայն մի միջոց, այն է նոյն ինքն
այդ պահանջ զգացող դասակարգը պէտք է ձեռ-
նարկէ ապագայի հասարակաց գրադարանի հիմքը
դնել: Դրա համար պէտք է Երևանի երիտասար-
դութիւնը մի ընկերութիւն կազմէ այդ նպատա-
կով, փող վեր գան, զրքեր գնեն ու մի փոքր
գրադարան հիմնեն: Այն ժամանակ գործը մա-
սամբ լուծված կը լինի: Այն մարդիկ, որոնք մաս-
նաւոր գրադարաններ ունէին, կամ որոնք ցան-
կութիւն ունեն ունենալ, տեսնելով արդէն որ
այդ գրադարանը գոյութիւն ունի, իրանց զրքերը
ուրախութեամբ կը նուիրեն նրան, մի քանիսը
փող կընծայեն և այլն: Մի խօսքով այժմ գործը
Երևանի երիտասարդութիւնից է կախված: Իրանք,
որոնք պահանջ են զգում, եթէ չը ձգտեն իրագործել
այդ խնդիրը, էլ ի՞նչ պիտի նրանց համար գրադա-
րան ստեղծէ: Սպասել, որ գետնից բնի բողկի
նման, դա աւելորդ է. տանիքներորդ դարում
այդպիսի հրաշքներ չեն կատարվում: Բայց ինչ է
պատճառը, որ հասարակաց գրադարանի խնդի-
րը, նոյնպէս և այլ շառ կենսական հարցեր լաւ
չեն ուսումնասիրվում, չեն արծարծվում և միշտ
մի տեսակ անյայտութեան մէջ են մնում: Դրա
պատճառները շառ են, բայց դրանց թուում ա-
ռաջնակարգ տեղ է բռնում մի տեղական հա-
մեստ լրագրի բացակայութիւնը, որի մասին
մտադիր եմ միւս անգամ գրել: Վերջացնում եմ
նամակս հրաւիրելով երևանցիներին լուրջ ուշա-
դրութիւնը հասարակաց գրադարանի հարցի վրա
և իրականաբար աշողութիւն եմ ցանկանում:

Մ. Մ.

ԺՈՂՈՎՈՐԻ ԵՒ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Յայտնի է, որ մեր այս ներկայ ժամանակում,
մեր քահանաների բերանից լսվում է մի այսպի-
սի տխուր զանգատ՝ թէ ժողովուրդը չէ յաճա-
խում եկեղեցին, թէ նա զլանում է տալ իր ա-
ւանդական տուրքը եկեղեցուն և քահանային:
Բայց արդեօք ճշմարիտ է, որ ժողովուրդը
սառնասիրտ է դարձել դէպի եկեղեցին և չէ
պատուում իր քահանաներին, թո՛ւ աստիճանի ճիշդ
է այդ և ինչից է առաջանում:

Ժողովուրդը, իրաւ չէ յաճախում եկեղեցի, սա-
կայն այդ դեռ չէ նշանակում թէ նա մուտացել է
եկեղեցին, այլ նրան չեն երևում քահանաները:
Ժողովուրդը զգում է, որ տեսնում է մի և նոյն
եկեղեցուն չորս քահանաներ հակառակ միմեանց,
բացարձակ կուր մղելով միմեանց դէմ:
Երբ երկու քահանաներ սովորաբար միշտ զը-
տնվում են միմեանց հետ վէճի կամ կռիւ մէջ,
երբ նրանցից մէկը միւսին նետ է արձակում,
երբ մէկը բողբում է երեցիփոխի գործած յայտնի
զեղծումների մասին, իսկ միւսը, որպէս երեցիփո-
խի երդուեալ հաւատարմատար սկսում է ժողո-
ւրդի մոքերը զրգուել, երբ մէկը խելով, որ այս
ինչ ազգային հիմնարկութեան համար իր ընկերը
խորհրդի անդամ պէտք է ընտրվի, ու սև նա-
խանձից կուրացած սկսում է պրօպագանդա ա-
նել և այնպէս անաշուղեցիկ միւսի ընտրութիւն-
ները,—արդեօք ժողովուրդը մեղաւոր է, որ չէ
յաճախում եկեղեցին, անդադար տեսնելով քահա-
նաների վէճը, կռիւ և բացարձակ աղաղակ ե-
կեղեցու մէջ: Պէտք է միայն տեսնել, թէ ինչ
աղմուկներ ու կռիւներ են ընկնում քահանաների
մէջ իւրաքանչիւր ամսավերջին, երբ նրանք ըս-
կում են իրանց եկամուտը բաժանել իրանց մէջ:

Ո՞վ չի համաձայնի մեզ հետ, որ իր պարտքը
լաւ հասկացող քահանան հրաշքներ կարող է անել
աւելի աղքատ, աւելի պտղաբեր կերպով տարածել
ժողովրդի մէջ աւետարանական ճշմարտութիւն-
ները, և այդ վարդապետութեան մէջ անփոփոխ
գոտ մարդկային բարոյականութիւնը: Բայց ու-
նենք այդպիսի պարտաճանաչ քահանաներ, ու

րոնք կարողանային ըմբռնել իրանց նշանակութիւնը և ի չար գործ չը դնէին իրանց ազգեցութիւնը: Գծարդը արար պատասխանը մեծ մասամբ բացատրական է լինում:

Սակայն հւմ մեղն է, եթէ ոչ հասարակութեանը, որ նա իր անտարբերութեամբ աւելի ոյժ է տալիս անարժան քահանաների շատանալուն և «խաթրու» ու խնամութեան համար ինքն զոհում է ամենայն բան:

Ա. Օ.

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Մարտի 1-ին

Եթէ չեմ սխալվում 1886 թվին, Ալեքսանդր օպեր մէջ նոյն քաղաքի գինուորական և քաղաքացիական բժիշկները հիմնեցին մի բժշկանոց: Յարգելի պարոնները չքաղաքներին բժշկում էին բուրդովին ձրի, իսկ դեղագետը 200% գիշումով էր տալիս դեղերը վկայված աղքատներին: 1887 թվին անձամբ գործ ունենալով նոյն բժշկանոցի հետ, տեսայ մի վերին աստիճանի մարդասէր, ազնիւ բժիշկ, որի մասին իսկոյն կը պատմեմ:

Այդ նոր հիմնած բժշկանոցից սկզբում ժողովուրդը հեռու հեռու էր ման գալիս և նայում նրա վրա այնպէս, ինչպէս թուրքը խողի մայն: Դատ անգամ բժշկանոցը ընդունելութեան ժամերին դատարկ էր լինում: Չանցաւ կարճ ժամանակ նոյն հիմնարկութիւնը, ինչպէս մի մագնիս, ձգում և ձգում էր դէպի ինքը խրտուող, փախչող հասարակ ժողովուրդին: Բժշկանոցը յաճախորդներով լի էր, ընդունելութեան ժամերն այլ ևս չէին բաւականանում: Ինչ պատահեցաւ, ով էր այդ մագնիսը: Դա գինուորական բժիշկ, գնդապետ Պաւելովն էր, որքան յիշում եմ, մի ժամանակ էլ Նովորոսի բարի անուն ժառանգած, մի ազնիւ, վերին աստիճանի մարդասէր, անշահասէր մարդ: Այդ պարոնը ոչ թէ ուրիշ բժիշկների նման յանուն երեք բուրդիանոց վիզիտների էր գործում, կամ ոգևորվում կապոյտ հագնանոցով, այլ ուղղակի բարոյական պարտք էր համարում օգնութիւն հասցնելու մի ասիական տգէտ հասարակութեան, որից հիւանդութիւնները, ախտերը անդադար ու անչափ զոհեր էին տանում:

Յարգելի բժիշկ Պաւելովն իր ազնիւ, անշահասէր վարմունքով և բարեխիղճ գործունէութեամբ մեր հասարակութեան ստորին դասակարգի մեծամասնութեան մէջ կարճ ժամանակում մեծ փոփոխութիւն գցեց, նրան մի մեծ քայլ անել տուց: Առհասարակ ոչ միայն Ալեքսանդր օպերի, այլ մեղանում ամեն տեղի հասարակ ժողովուրդը աստիճանեց, հայտնաբերվեց վերաբերվում դէպի բժիշկը և այժմանս բժշկականութիւնը: Հիւանդութեան ժամանակ ժողովուրդը միշտ դիմում է կախարդներին, սրբերին, երկնային այլ և այլ աներևոյթ զօրութիւններին... իսկ յարգելի Պաւելովն մեծ հարուած տուց այդ անտիկապաշտութիւններին, կախարդներին, և դարմանալի աջողութիւն ունեցաւ Դրա պատճառն այն էր, որ աջող կերպով բժշկելով հիւանդներին, կենդանի օրինակով ցոյց էր տալիս բժշկական գիտութեան անդհանառելի օգտաւէտութիւնը, բայց որ զլիսաւորն է, ինքն անշահասէր էր: Այն բերանը, որ առաջ հայտնաբեր, թուր և մուր էր թափում բժիշկներին վրա, խոյս տալով նրանցից, այժմ օրհնում, անդադար օրհնում է բժշկութիւնը: Նոյն անտիկապաշտ, կախարդների զոհ գնացող ժողովուրդը այժմ խումբ խումբ դիմում է բժշկանոց: Հիւանդներից շատերը իմ աչքի առաջ ծաղրում, անիծում էին կախարդներին, ասիական խաբեբայ, զիր-բանող բժիշկներին, որոնք փող, գառ և զանազան ընծաներ ստանալով, ոչինչ օգուտ չէին տուել և անպայտացել:

Այս փոքրիկ օրինակից տեսնում ենք, թէ որքան կարևոր է դարգացած, մարդասէր բժիշկը դաւաճների համար: Ինքն կարևոր է անշահասէր բժիշկը՝ այն անտիկապաշտութիւնների, նախապաշարմունքների, խաբեբայութիւնների դէմ մաքառելու, որոնց ազդեցութեան տակ հեծում է ժողովուրդը:

Սակայն Ռուսաստանում աւարտող մեր ուսանողները, եթէ վերադառնում էլ են հայրենիք, մնում են օրփոխում, գաւառներ չեն գալիս: Եւ ինչպէս ուսումնաւարտ բժիշկը գնայ գաւառ, ուր նրան սպասում է գործը, եւ անգուցն գործունէութիւնը, աշխատանք, տանջանք, բանի որ օրփոխում նա կարող է ապրել մեծ քաղաքի ամեն տեսակ յարմարութիւնով, և պրակտիկա ունենալ, ստանալով վիզիտին 2—3 բուրդի չափաւոր է բա-

ւական հերոսութիւն ունենալ օրփոխող հիւանդ և գաւառներ դնալու համար, իսկ մեր թուլամորթ սերունդից մենք հերոսութիւն պահանջել չենք կարող:

Ա. Պ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐԲԵՆԴԻՍ մեղ գրում են փետրվարի 28-ից հետեւեալը: «Այժմ մեղ մօտ գրեթէ ամեն գիշեր անձրև է գալիս և փողոցներում այնպէս ցելա է գոյանում, որ հազիւ կարելի է քաղաքում անց ու դարձ անել: Առհասարակ Գերբենդում սաստիկ ընկած դրութեան մէջ է և փողոցներում կատարեալ լուրժիւն է տիրում»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեղ գրում են: «Պետերբուրգում մինչև այժմ լոյս տեսած ժողովրդական գրքերայինը հայերէն լեզուով, թուով հինգ հատ էին և այդ գրքերայինների բոլոր օրինակները այժմ արդէն սպառված են, այլ ևս ծախս չը կան: Գրքերայինների այդ սրբնթաց սպառումը ստիպեց հրատարակողներին «Վիշնիւմ Տէլ» վեցերորդ գրքոյը բաց թողնել 4,000 օրինակի քանակութեամբ»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեղ գրում են հետեւեալը: «Մինչև այժմ բարձրագոյն ուսումնարաններում հարցաքննութիւնները միշտ լինում էին ջատկից յետոյ, իսկ այս տարի ջատկից ուշ լինելու պատճառով, հարցաքննութիւնները կը սկսվեն ջատկից առաջ, ապրիլի սկզբներում»:

Մեղ հաղորդում են որ Պետերբուրգի հայ գաղթականութիւնը իր նախկին հովիւին, հայր խորեւ Ստեփանէին, իր երախտագիտութիւնը յայտնելու համար, վճել է ուղարկել նրան թէօդոսիա մի ուղեքն և մի խաչ:

Տեղական ուսու լրագրները հաղորդում են, որ Անդրկովկասեան երկաթուղու փոթիկ կայարանի գլխավորը պ. Գլոբալովսկի, այս օրերս սպանված գտնվեցաւ իր բնակարանում: Սպանողը կայարանի մի ծառայող է, որին կայարանի գլխավորը քանի մի օր առաջ ծառայութիւնից արձակել էր:

Նախկին քննիչ խորեւով, որ այժմ բանտարկված է և որ մեղադրվում է իր բնակարանը դիտմամբ կրակ գցելու, այս օրերս, ինչպէս հաղորդում են տեղական լրագրները, պահապաններով բերվեցաւ նահանգական դատարան, դատաստանական հարց ու փորձին ենթարկվելու համար: խորեւով սև շորերով էր հագնված և նրա դէմքը շատ չէր փորձի: Դատարանին անդամ Կոնստանտին հարց ու փորձի ենթարկեց նրան: խորեւով ինքրեց նոր վկաներ կանչել իր գործի քննութեան համար և մի և նոյն ժամանակ խնդրեց գործի քննութիւնը որքան հար է շուտով նշանակել: Գործի պաշտպանութիւնը յանձն առաւ երդուեալ հաւատարմատար պ. Շերվիլէ: Եթէ մեղադրվողի խնդրեց ընդունվի, գործի քննութեան համար կանչված վկաների թիւը 100-ից աւելի կը լինի:

Մենք լսում ենք, որ ղինուորագրութեան համար Անդրկովկասում կատարված ընտանեկան ցուցակագրութիւնից երևաց, որ հայերի թիւը Անդրկովկասում ոչ թէ 600 հազար է, ինչպէս առաջ կարծւում էր, այլ 1 միլիոնից աւելի է:

Լրագրներում կարդում ենք որ Բեսարաբիայի նահանգական դեմստովն նշանակեց 20,000 բուրդի խորեւայի երևալու դէպքում անհրաժեշտ նախազգուշացնող միջոցներ ձեռք առնելու համար:

«Курск. Лист» լրագրում կարդում ենք, որ Եկատերինսկում քաղաքի ուսումնական հոգևոր սեմինարիայում այս տարվանից սկսվեցաւ տարրական բժշկականութեան դաստաւութիւնը ս. սիրնոյից հաստատված պրոգրամային համեմատ:

«Медицинская Вещда» չաբթաթերթը հաղորդում է որ այս տարի Կիեւի համալսարանի բժշկական ֆակուլտետում աւարտողներ իրանց ուսումը 104 երիտասարդներ բժշկի աստիճանով:

Յօշուտ հրկիզեալ Ջէյթունցիներին հանգանակող Թիֆլիսի մասնագործի անշամ պ. Ալեքսանդր

Մէլիք-Աղաբեանց խնդրում է մեղ յայտնել մասնագործի կողմից, որ մասնագործը առաջիկայ ապրիլ ամսի 10-ին դադարեցնելու է իր գործունէութիւնը: Յայտնելով այս մասին ի գիտութիւն յարգող հասարակութեան, մասնագործը խնդրում է թշուառ գէյթունցիներին օգնել կամեցողներին շտապեցնել իրանց նպատակները մինչև նշանակված ժամանակամիջոցը:

Ինչպէս մեղ գրում են ԳՕՐԻՍԻՑ, այս օրերս այնտեղ և օրին տարեկան մի աղջիկ պատկել են մի երիտասարդի հետ: Եւր պէտք է վերջ տրվի այդ սեսակ բարբարոսութեան:

ԲԱՂՈՒԻՑ մեղ գրում են: «Մի քանի հանգամանքների պատճառով Մարդասիրական ընկերութեան նոր շինութեան հիմքը վարդանանց տօնի օրը չօրհանեցաւ: Այդ պատճառներից մէկն էլ այն է, որ շինութեան յատակագիծը ճարտարագետ Կարապետեանցի առաջարկութեան համեմատ, կամենում են ենթարկել նշանաւոր փոփոխութիւնների, որոնցով կարելի է լինում ամբողջ ծախսը մօտ 60—70 հազարով պակասեցնել, այնպէս որ շինութիւնը կը նստի մօտ 50,000 բուրդի: Այս վերջին գումարն էլ կը մտնի այն դէպքում միայն, երբ կը կամենան, որ շինութիւնը չքիւ լինի: Իսկ եթէ կը բաւականանան միայն հասարակ շինութիւնով, այն ժամանակ ծախսը կը լինի ոչ աւելի քան 35—40 հազար: Այս գումարը շատ չը պէտք է համարել, քանի որ նոր շինութեան մէջ պիտի զետեղվի ոչ միայն ուսումնարանը, այլ և տեսչի և վարժուհու բնակարանները, ընկերութեան խորհրդարանը և մի ընդարձակ դահլիճ: Գանաղան հանդէսների, կօնցերտների և ներկայացումների համար: Ուրեմն, եթէ հաշուել չը լինենք վերջինը, որ պիտի կադմէ ընկերութեան եկամուտների աղբիւրներից մէկը, ուսումնարանի շինութիւնը կը նստի 25—30 հազար, որը ի հարկէ, շատ էլ մեծ գումար է: Բայց այդ ամենը կախված է նրանից, թէ ընկերութեան խորհուրդը որ յատակագիծ կընդունի. պ. Կարապետեանցիներ, թէ նախկինը: Յանկալի է, ի հարկէ, որ նախկին յատակագիծով որոշած անագին գումարի մէջ մի փոքր խնայողութիւն լինի»:

ԳՕՐԻՍԻՑ մեղ գրում են. «Մարտի 2-ին, փոստի ճանապարհի մօտ, Հաքարու գետի աջ կողմին, մէկ ձորում թուրք հովիւները պատահմամբ գտնում են մի կնոջ դիակ: Ինչպէս երևում է, չարագործները կնոջը սպանելուց յետոյ նրա դիակը հողով ծածկել են. բայց վայրենի գազանները հոտով գտել, բացել են դիակը և մինչև անգամ ոտներն էլ կերել են: Սպանութեան պատճառը չէ յայտնվել և չարագործները չեն գտնվել: Քրէնուութիւն է սկսված»:

Տեղական ղինիներ յարաճանապարհը շարունակում է զարգանալ: Ինչպէս հաղորդում է վրաց «Իվլերա» լրագրը, Սիբիրի մի հարուստ վաճառական, Պոլիսկով, որը առհասարակ է պարագլուում Ամիւրպատինսկ քաղաքում, գրել է Թիֆլիսում գտնվող իր ծանոթներին, որ վերջինները տեղեկացնեն իրան, թէ ինչ պայմաններով կարելի է Կախիթի ղինին արտահանել Վրաստանից դէպի Սիբիր:

Մարտի 8-ին, ինչպէս հաղորդում են տեղական լրագրները, Թիֆլիսի օրիորդական գինեւորայի 5-րդ դասառան մի աշակերտուհի, 17 տարեկան, անձնասպանութիւն գործեց, թունաւորվելով ջրի մէջ լուծված լուցկիների զլինեցով: Անձնասպանը թողել է մի գրութիւն, որի մէջ աշխարհում ապրելու աւելորդ է համարում: Աղջիկը ապահոված ընտանիքին էր պատկանում:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի օրիորդական խնտուտուր բնակարանը շատ չին և խախուտ դրութեան մէջ է, անհամապատասխան մանկավարժական պայմաններին և շատ նեղ բազմաթիւ աշակերտուհիների համար: Այս բոլորը աչքի առջև ունենալով, ինտիմուտի վարչութիւնը ձեռնարկել է յիշեալ հիմնարկութեան համար մի նոր և ընդարձակ բնակարան շինելու: Բնակարանի շինելու տեղը որոշված է Ս. Նունէի ուսումնարանի դէմ գտնվող ինտիմուտուր պատկանող գետինը, որին և աւելացրած է 40 հազար բուրդով: Ինչպէս մի նոր դեպքին Շինութեան համար ամբողջ

ծախսը նշանակված է 300 հազար բուրդի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեղ գրում են հետեւեալը: «Փետրվարի 28-ին տեղիս հայոց եկեղեցում հայ ուսանողների խնդրեցով կատարվեցաւ հանգուցեալ Ներսիսի հոգեհանգիստը, որին ներկայ էին բաւական թուով ժողովրդականներ»:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻՑ մեղ գրում են, որ մարտի 3-ին, վարդանանց տօնի օրը, պատարագից յետոյ հայ հասարակութեան նշանաւոր մասը հաւաքվեց օրիորդաց դպրոցի դահլիճում, որտեղ աշակերտները և աշակերտուհիները երգեցողութեամբ ընդունեցին հիւրերին: Նոյն օրը պ. Սահակ Եղիշարեանցի տանը, ճաշի ժամանակ, ստորագրութիւն առաջարկվեցաւ քաղաքի արական հայոց ուսումնարանի վերաշինութեան օգտին: Ամիւրպատինսկ հանգանակվեց մօտ 500 բուրդի, որից 100 բուրդին նուիրեց ինքն պ. Նիքիթարեանց: Նոյն երեկոյ ուսումնարանի դահլիճում, Հին-Նախիջևանի հայոց երկսեռ դպրոցների օգտին ուսուցչական խումբը մի թատրոնական ներկայացում տուց: Խաղացին «Վարդան զօրավար» պիէտան և մի վոքալի: Գահլիճը լի էր, բայց խաղը շատ թոյլ անցաւ:

Ինչպէս մեղ գրում են Պետերբուրգից, մայրաքաղաքի հայոց խնտիդեցիներ և բարձրագոյն դպրոցների հայ ուսանողները դիտաւորութիւն ունեն մի ճաշկերոյթ տալ Մկրտիչ Սանասարեանցին: Հաշկերոյթի ժամանակ հայոց հասարակութեան և ուսանողների կողմից Սանասարեանցին մի ուղեքն կը մատուցվի, որի մէջ Սանասարեանցին յատկացվում են «պաշտօնի բարեգործ» և «ազգի բարեբար» տիտղոսները:

ՕԼՏԻՑ ստացանք պ. Մկրտիչ Քիւրքեանից 67 բուրդի յօգուտ Ջէյթունի հրկիզեալների, որ պարոնը հաւաքել է Ս. Տէր-Մարգարեանի ընկերակցութեամբ Օլտի հասարակութիւնից: Նախկին 132 բ. 70 կ. գումարի հետ այժմ կունենանք յօգուտ ղէյթունցիների ընդամենը 199 բ. 70 կ.:

Վաղը, կիրակի օր, մարտի 13-ին, քաղաքային թատրոնում լինելու է մի կօնցերտ յօգուտ Պետերբուրգի աղքատ ուսանողների. կօնցերտի վերջում պ.պ. Բաշինջաղեան և խորագործիչ Նիկարիչների ձեռքով կենդանի պատկերներ կը զուլնի: Կօնցերտի նպատակը այնքան համակերել է, որ նոյն իսկ աւելորդ էլ է յորդը կարող հասարակութեանը, որը անկասկած կը շտապի վաղը երեկոյան լցնել թատրոնը, և այդպիսով միջոց կը տայ մի փոքր թեթեւացնել օգնութեան կարօտ ուսանողների նիւթական ծանր վիճակը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌԱՊԵՐՈՒՄԻՑ ԶՈՒՐԿ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Երբէք չունենալ որոշ սկզբունք, երբէք չը թելադրվել որոշ համոզմունքներով, — ահա այն յատկութիւնը, որին երդվել են հաւատարիմ մնալ այն մարդիկ, որոնք այսօր իբրև թիւրքահայերի սահմանադրութեան ներկայացուցիչներ, գործում են թէ Պոլսում և թէ թիւրքա-Հայաստանի դաւաճներում Հասարակական, կամ, ինչպէս ընդունված է Պոլսում ասել, — ազգային գործունէութեան ասպարէզ դուրս գալ, առանց որոշ համոզմունքների և իդէաների, — կը նշանակէ «չուր մաղը», կը նշանակէ այսօր մի քանի քայլ առաջ գնալ, և վաղը դրա փոխարէն մի քանի քայլ յետ գնալ, և այդ բանը ամենայն ճշտութեամբ ապացուցել են և ապացուցանում են թիւրքահայ գործողները՝ իրանց վարմունքներով, և իրանց թողոր ձեռնարկութիւններով: Թողնենք անցեալը, թողնենք այն անցած ժամանակները, երբ Պոլսում ինտրիգաներ կին լարվում նոյն իսկ խրիմեան Հայրիկի պատրիարքութեան և Ներսէս Վարժապետեանի գործունէութեան դէմ, երբ գաղափարը և ընդհանուր շահերը օղն էին ցնդում Պոլսի գործողներին և ազգային սահմանադրութեան ներկայացուցիչների անձնական կրքերի և անձնական շահերի առաջ: Վերցնենք նոյն իսկ վերջին դէպքերը, վերցնենք նոյն իսկ վերջին ամիսների դէպքերը, որոնք այնքան աղբուր հանեցին ոչ թէ միայն Պոլսում, Վանում և Զմրու-

նիայում, այլ և թիրեքաց պետութեան ստանմաներից դուրս, նոյն իսկ Եւրոպայում Այդ մի քանի ամիսներ ընթացքում արծարծվեցան ոչ թէ միայն գերեզմանատների և առաջնորդական երկրորդական խնդիրներ, այլ և հանդէս եկաւ թիրեքացայեցի սահմանադրական իրաւունքների կարեւոր խնդիրը, որը շոշափում է թէ Պոլսի պատմութեան իրաւասութեան և թէ թիրեքացայեցի եկեղեցական ու դպրոցական գործերի խնդիրը: Փաստերը ընդհանրութեան առաջին են, և ամենքն էլ ակնառաս յեղան և կարող են լինել, թէ ինչպէս այդ մի քանի կարճ ասիաների ընթացքում թիրեքացայեցի իրաւունքների ներկայացուցիչները պարբերաբար փոփոխեցին իրանց ընթացքը և ուղղութիւնը:

Արեւելեան քաղաքականութեան այդ հաւատարմի պաշտպանները, որոնք դաւանում են այն սկզբունքները թէ՛ պէտք է յարմարվել հանգամանքներին, մինչև անգամ կարծում են որ այդպէս անդադար փոփոխելով իրանց ուղղութիւնը և ընթացքը, աւելի խելացի են վարվում, աւելի քաղաքագիտութիւն են արտայայտում, և աւելի լաւ կը պաշտպանեն իրանց յանձնած իրաւունքները, քան թէ այն ժամանակ, երբ հետեւին հաստատա և որոշ ուղղութեան: Մի ժամանակ Պոլսի ինտելիգենցիան հնգութեամբ էր վերաբերվում դէպի Ներսէս Վարժապետեանի հրաժարականները, որ նա անդադար ներկայացնում էր Բ. Գրան, երբ դա չէր կատարում իր խոստումները, երբ դա չօշափում էր թիրեքացայեց իրաւունքները: Մինչև այժմ էլ Պոլսի ազգային գործողները չեն հաշտվում այն մտքի հետ, որ ունենալով հաստատ համոզմունք, և որոշ ծրագիր իր գործունէութեան համար՝ Ներսէս պատրիարքը ուրիշ կերպ չէր կարող վարվել, բայց եթէ հրաժարվել իր բարձր և պատասխանատու պաշտօնից: Իսկ այսօր Պոլսում տիրում է կատարելապէս արեւելեան քաղաքականութիւն. Գարուիւն պատրիարքը՝ իր պատրիարքութեան առաջին օրից, իր բոլոր գործակիցների հետ միասին, հետեւում է այդ քաղաքականութեան, հաւատում է ամեն մի խօսքի, սպասում է, անդադար բաւականանում է խոստմունքներով, և միշտ նկատում է, որ խաբված է, բայց էլ չարժանակում է խաբվել... Ներքա այսօրվայ ուղղութիւնը միանգամայն հակառակ է երէկվայ ուղղութեան. այդպէս է վարվում և ազգային ժողովը: Այդպէս են վարվում դրանք ամենքն էլ թէլ արտաքին մեծ հարցերում, և թէ ներքին աւելի երկրորդական հարցերում: Փաստերը շատ շատ են: Բաւական է յիշել միայն այն դէպքերը, որոնք տեղի ունեցան վերջին ժամանակները Վանում, Զմիւռնիայում և Պոլսում: Այդ դէպքերը այնպիսի բնաւորութիւն ունենին, նրանք չօշափում էին այնպիսի հարցեր, որոնց մասին միակարծիք պէտք է լինէին սահմանադրութեան բոլոր ներկայացուցիչները, որոնց մասին որոշ համոզմունք պէտք է ունենալին այդ բոլոր գործիչները: Բայց դրա փոխարէն այդ բոլոր դէպքերի և այդ դէպքերի մէջ խառն անձանց պատճառով այսօր Պոլսում մի քանի բանակներ են կազմված, և դրանցից մէկը կամ միւրը իր կրքերի և դիտումների համար պաշտպանութիւն է ցոյց տալիս այն մարդուն և իրողութեան, որը արժանացել է ազգի ատելութեան միայն:

Ինչ է եղել և ինչ է լինում այդ սխալ, և փոփոխական ու համոզմունքից զուրկ գործունէութեան հետեւեցը,—այն, ինչ որ մենք այսօր տեսնում ենք. այսինքն աղմուկ, դժգոհութիւններ, զանազան խաբուսիկ յոյսեր, և ուրիշ ոչինչ: Այդպէս է այսօր, և այդպէս կը լինի վաղը, եթէ թիրեքացայեց գործիչները կը շարունակեն իրանց փոփոխամիտ, համոզմունքից զուրկ ընթացքը:

Խ. Մ.

ԵՐԹՈՒՄԱԿԱՆ ՄԱՍՈՒՆԵՐ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՐԸ

Փետրվարի 25-ից սկսած, երբ վախճանվեցաւ Վիլհելմ կայսրը, մինչև այժմ եւրոպական մասում չէր համարու թէ ամբողջապէս զբաղված է Վիլհելմ կայսրի և նոր կայսր Ֆրիդրիխ անձնաւորութեամբ, գործունէութեամբ և ընթացքով: Մեռնելուց յետոյ, մահուան առաջին օրերից մարդկանց առհասարակ շատ էլ խիստ չեն ընդադատում և եւրոպական մասում լայն Վիլհելմի գործունէութեան մասին, խօսելով նրա երկարամեայ թագաւորութեան մասին, ընդհանրապէս աւելի

համակրական կարծիք յայտնեց նրա մասին, քան թէ հակակրական: Անաչառ և խիստ ընդադատութիւնը, ի հարկէ ապագայի գործն է, երբ փաստերի հիման վրա կը որոշվի այն տեղը, որը իրաւունք ունի բռնելու Վիլհելմ կայսրը իբրեւ պետական գործիչ, և իբրեւ մի ամբողջ կայսրութեան երկրների մամուլ: Կարծիքները, հետաքրքրական է իմանալ, թէ ինչ է ասում Ֆրանսիական մամուլը: Գերմանիայում տեղի ունեցած վերջին դէպքերի մասին, որովհետև հանդուգնալ կայսրի անձնաւորութիւնը շատ սերտ կերպով կապված է այն հայրենասիրական վերքի և տխուր յիշգրտութիւնների հետ, որ Ֆրանսիան կրեց և կրում է մինչև այժմ էլ: Մենք չենք խօսի այն տեսարանների մասին, որոնք տեղի ունեցան Փարիզի մէջ, ամբողջ կողմից, որը հնգնութեամբ վերաբերվելով դէպի Վիլհելմի անձնաւորութիւնը, և վառվելով ազգասիրական կրակով, սկսեց նոր ցոյցեր անել Բուլանշէին: Բայց փարիզի քաղաքական շրջաններում Վիլհելմ կայսրի մահը մեծ ազաւորութիւն թողեց, և իսկոյն առաջ բերեց հետեւեալ հարցը: «Ինչ հետեւեալ կարող է ունենալ այդ դէպքը Ֆրանսիայի համար»: Հասկանալի է, որ այդ հարցը մեծ կապ ունի այն բանի հետ, որը շփ բանի օր առաջ անտրոշ կերպարանք ունէր, այն է, թէ արդեօք Ֆրիդրիխ կրնա կը կանգնի պետութեան գործերի թէ կառավարութեան ղեկը իր ձեռքը կառնէ նրա որդին, Վիլհելմ Նոյն միտքը յայտնեց ընդհանրապէս և Ֆրանսիական մամուլը: «Figaro» լրագիրը յայտնեց, որ ոչինչ առիթ չը կայ սպասել, որ Վիլհելմի մահով գործերը իսկոյն կերպարանափոխ կը լինեն. լրագրի կարծիքով այդ կերպարանափոխութիւնը դանդաղ կերպով կը լինի, քանի որ նոր կայսրը յարմար չէ համարել կռուել Բիսմարկի հետ, և Բիսմարկի այնպիսի մարդկանցից չէ, որոնց կարելի լինի հրաժարեցնել: Բայց որ կերպարանափոխութիւն Բիսմարկի քաղաքականութեան մէջ կը լինի,—դրանում չէ կասկածում «Figaro» լրագիրը: Խօսելով Վիլհելմի իշխանի բնաւորութեան մասին, կատարեալ «Autorité» լրագրում յայտնեց, որ և Ֆրանսիայի համար մեծ բաղաւորութիւն կը լինէր, եթէ գերմանական թագաժառանգի (այժման կայսր) կենսաբան երկարատեւ լինի, ըստ որում նա խելացի և լուսաւորված պետական գործիչ է, և թէ նա մի ամեն տեսակ միջադէպային ընդհանրութեան «Radical» լրագրի կարծիքով, Ֆրանսիայի համար ոչինչ վտանգ և առանձին նորութիւն չէ կարող ներկայացնել: Գերմանիայում տեղի ունեցող կայսրի փոփոխութիւնը «Justice» լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ Վիլհելմի մահը ոչ թէ պատերազմի վտանգ չէ ներկայացնում, այլ և աւելի յոյս է տալիս խաղաղութեան պահպանման, քանի որ այժմեան կայսրը աւելի խաղաղասիրական զգացմունքներ ունի: Բուլոնի լուրի կարծիք է յայտնում Բոչֆորի «Intransigent» օրգանը: Երկու կերպով, որ պրինց Վիլհելմ մեծ դեր կը կատարի Գերմանիայում, և զուցէ դանի էլ կը բարձրանայ, Բոչֆոր առաջարկում է Բուլանշէին ձեռքը յանձնել Ֆրանսիայի ղեկը, քանի որ, իր կարծիքով, նա միայն կարող է վտանգի առաջին առեւել: Բայց Բուլանշէ, մահաւանդ փարիզում տեղի ունեցած դէպքերից յետոյ, այդպիսի ղեկավար լինել, ի հարկէ, չէ կարող:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 7 մարտի

Միացեալ-Ղնկերութեանց ի նպաստ պարահանդէս ընդ հովանաւորութեամբ կայսեր տրուեցաւ ամսոյս 5-ին, ուրբաթ գիշեր: Օղջ նպաստաւոր, զարանային ջերուկ օդ մը, հետաքրքիր հնարաւոր եղաւ Հայոց և օտարաց Պոլսի մէջ թաղերէն զինքն ի Բերդ իր թաղարանը: Բազմութիւնն այնքան հոգ էր նոյն իսկ փողոցներուն մէջ որ Բերդայի մեծ պողոտային անցուղաւքը շատ զգուշարիւն եղած էր: Թատրոնը լի, օթեակներն ամբողջապէս զբաւուած, երաժշտութիւն ու պարը, զեղեցիկ ընկերութիւն մը հրճուալի գիշեր մը անցնել տուին Պոլսեցոց: Պոլսի ուր ամէն ազգ և ազգի խառն են միշտ իբր զարմանալի երեւոյթ մ'է Միացեալ-Ղնկերութեանց պարահանդէսն: 78 թուականին սկսեալ, Արարատեան ընկերութեան առաջին պարահանդէսէն սկսեալ, տրուած է տասն և մէկ ձմեռան պարահանդէս և մէկ ամառն գիշերահանդէս և միշտ ճաշակի կողմանէ

այդ պարահանդէսներ մեծ հռչակ զբաւած են նոյն իսկ Պոլսի գոտնուղ Եւրոպացոց մէջ որը ամէն տարի անհամբեր կը սպասեն այդ հանդիսին: Ուրիշ ազգերու պարահանդէսներն այդքան հետաքրքրութիւն չեն գրաւել: Թէ որքան զուտ հասողիկ եղած է տակաւին յայտնի չէ, բայց հաւանորէն տասն հազար բուրժուէն աւելի եղած լինելու է:

Շաբաթ օր «Արեւել» կը հրատարակէր նկարազարդ յայդ հանդիսին և կարծես թէ հակադրութեամբ մը անմիջապէս այդ նկարազարդները կաւեցնէր. «Հաճեցնէ նոր հասած նամակներ կը ծանուցանեն թէ, սովի երթալով կը սաստկանայ, քանի մը անձինք սովամահ եղել են և շատեր անօթութենէ: Նուազեալ անկողնոյ կը ծառայեն և կիսամեռ վիճակի մէջ են: Տակաւին և ոչ մի կողմէ օգնութիւն եղած է, բողոքական պատուելին և կաթոլիկ կղերն իրենց ժողովուրդը պաշտպանելու և ուրիշներն որսալու կը ջանան Ամերիկայէ և այլ տեղերէ հասած նպատակներով, իսկ մեր ազգայինք սովալուրկ վիճակի մէջ ակնկալ կը սպասեն Կ. Պոլսի դրկուած գործեանց արդիւնքին: Ահա այս վերջի յոյսն է իրենց ներկայ միջնորդութիւնը»:

Եւ այդ տխուր, սիրտ կտրող լուրերն ամէն կողմէ կը հասնին, ամէնուրեք սով, մահ, այնպէս որ մարդուն միտքը շփոթած կը մնայ, և կը հարկադրուի ինքնին հարցնել՝ միթէ այս պարերն ու հրճուանքներ ներելն են մեզ, միթէ մեզ պոսեցուցան համար հառաւ չ'է հանրային ուրախութիւնն ու հրճուանքն երբ մեր եղբայրներ սովամահ կը կորնչին, անպատասպար անձրեւն ու ձիւնն կը դողդոջան:

Ոչ ապաքէն ազգային սուգ մը պէտք էր մեզ համար: Զէնք կարող արդեօք հանդիսանալութիւնն ընել մեր մէջ, նուիրել ընկերութեան այդ դուստրն,—քանի որ նուիրեալութեան ամենաստուար մեծամասնութեամբ հայն են և պար ու թատրոն, երգ ու երաժշտութիւն անհաշտ համարել մեր սրբոյ միջնորդն հետ: Եւ սակայն ոչ ապաքէն շատ անգամ մենք պոսեցնէքս նմանած ենք փոքրիկ տղաներու, որը ուրախ դուարթ կը խնդան երբ միւս սենեկին մէջ աներիններն մին դադաղին մէջ պառկած է:

Այլ այս վշտերն կրնան չափաւորուիլ երբ ներկայումս մէջ ողբան ալ կուրախանան Պոլսոյ հայը, այսու հանդերձ չեն մոռնար նաև իրենց հեռաւոր եղբայրներն. սովեաներու համար աշխատութիւններ կըլլան, և երէկ լարեկներու կերակին հանդիսանալութիւններ եղած են ի նպաստ հայ սովեաց, բայց թր կողմի սովի—այդ յետոյ կը տեղեկանք:

Միջնորդական են նաև այն աշխատութիւններն որը կը կատարուին ի նպաստ Զէնքի հրկիզեցոյ, որոց մէջ այնքան լաւ բաժին մը են զուտ ունիք: Շաբաթ օր «Արեւել» հրատարակեց Հրկիզեցոյ Զանձաժողովի համառօտ մէկ տեղեկագիրն որմէ կը տեսնուի թէ որքան գործեր ըրած են, այդ տեղեկագրի մասին հարկ չէ աստ խօսել, քանի որ նախորդ թղթատարով ձեռք ալ խրկած են: Անշուշտ մտաւորապէս մանրամասն տեղեկագիրն ալ կը հրատարակուի:—Ինչպէս ուրիշ տեսնալով դրած են Զանձաժողովը կազմող երկուսարդներն ամէնքն ալ ընտիր անձնաւորութիւններ են, ամէնիւ, ազգասէր, խոհական, նիւթական կացութիւնին շատ լաւ արդէն ժողովուրդական անուններ են, բայց հիմայ այս առթիւ ալ աւելի ևս սիրելի եղան, վասն զի շատ գործունէութիւն և խնամք ցոյց տուին:

Նախորդ թղթեղեցութեամբ մը ըսած էի թէ Պատրիարքն արքունի պալատն երթալու առթիւ քանի մը կէտեր կան որոց վրայ խօսելու հարկ չը կար, որովհետև Պոլսոյ մէջ ալ զարդերն կը պահեմ երկու բառով: Եւ թէ Պատրիարքն առաջին անգամ փետրուարի 22-ին երկուշաբթի օր շնորհունուեցաւ կայսեր կողմանէ, պատճառն հետեւեալն է: Կրօ. և Քաղ. Ժողովոց որոշմամբ Պատրիարքը թաքրի մը կը զրէ, բայց ոչ առ Կրօ. ընդ խրկուելու, այլ ուղղակի կայսեր ներկայացուելու: Այդ թաքրի մէջ Պատրիարքը կը բացատրէ թէ ինչպէս Պոլսոյ դրաւումէն ի վեր քրիստոնեայք առանձնաշնորհաբար վաղելած են, առանձնաշնորհաբար զոր հետեւեալէ Սուլթանները հաստատած են, հետեւաբար քրիստոնեայք չեն ուղեր այդ իրաւունքներն իրենց ձեռքէն հանել, մանաւանդ որ այն ամեն քրիստոնեայ տէրութիւնն ուր իսլամ հպատակներ ունին ա-

նոնց համար բացառիկ օրէնքներ հաստատած են և անոնց կրօնական դաւանանքի համեմատ թիրեքիս լինելով իսլամ պետութիւն մը, բնականաբար քրիստոնէից համար պէտք էին ուրիշ օրէնքներ անոնց կրօնական դաւանանքի համեմատ. առանձնաշնորհաբար ուրիշ բան չեն բաց եթէ այդ բացառիկ օրէնքներն. կարելի չէ պահանջել որ քրիստոնեայք իսլամական օրինաց համեմատ կարգադրեն իրենց ընկերական կացութիւնը:

Այս թաքրի լաւ գրուած է և բացի առանձնաշնորհաբար խնդրէն ուրիշ խնդրոց համար ալ հարկ եղածն ըստած է: Արդէն ուրիշ նամակաւ մը հաղորդած էի թէ այսպիսի թաքրի մը պիտի գրուի. Կրօ. և Քաղ. Ժողովները կը ստորագրեն դայն և Պատրիարքաւոր գործակատարին ձեռքը կը խրկուի պալատը: Փետրվարի 22-ին երբ Զարուկին Պատրիարք կերթայ պալատ, կայսեր Ա. քարտուղարը կըսէ թէ՛ կայսրը տակաւին չէ կարգացած Պատրիարքի թաքրի մը: Եւ եթէ այդ աւուր համար ունկնդրութիւն որոշուած էր, բայց թաքրի խնդիր չը կար, հետեւաբար ուրիշ աւուր պէտք է սպասել:

Փետրուար 26-ին, ուրբաթ օր, կայսրն ընդունեց Պատրիարքն: Ինչպէս կերել վերջին առնուած տեղեկութիւններէ, Պատրիարքը զփուարին կացութեան մը մէջ գտնուած է հանդէպ կայսեր:

Իսկ գալով թաքրի մը, տակաւին յայտնի չէ թէ կայսրն պիտի խրկէ դայն ի Կրօն հրապարակով որ գործադրուի թէ ոչ:—Արդէն Պատրիարքն ընդունելէ առաջ կայսրը իւր մօտ կանչած է դատական գործոց նախարարն և նորա կարծիքներն իմացած. ինչպէս գիտէք դատական գործոց նախարարն է որ այս խնդիրներն կը յարուցանէ:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինում լուրեր են տարածված, որ Ֆրիդրիխ կայսրը քաղաքական կտակ է գրել իր որդու համար: Այդ կտակը պարունակում է ներքին և արտաքին քաղաքականութեան մանրամասն պրոգրամներ:

—Սֆիայում նորերում տեղի են ունեցել շատ ձեռքադրութիւններ:

—Բերլինում հրատարակվեցաւ Ֆրիդրիխ կայսրի հրովարտակը՝ իշխան Բիսմարկին ուղղած: Այդ հրովարտակը, որը արտայայտում է նոր կայսրի համեմատաբար շատ ազատամիտ հայեացքները ղլխաւորապէս ներքին հարցերի մասին, ահադին տպաւորութիւն է թողել ամբողջ Եւրոպայում: Ֆրիդրիխ կայսրի արտայայտած պրինցիպները մեծ մասամբ հակառակ են այն ուղղութեան, որով ընթանում էր Վիլհելմի ժամանակ իշխան Բիսմարկի:

—Չը նայելով իր հիւանդութեան, Ֆրիդրիխ կայսրը անդադար դադարում է և ցոյց է տալիս ահադին եռանդ և ոյժ պետական գործերով զբաղվելու մէջ: Ամեն օր կայսրը հարկաւոր գործերին որոշում է տալիս: Միայն նա շատ քիչ է խօսում, և շատ անգամ իրան հետ խօսողներին բերանացի պատասխան տալու փոխարէն պատասխանում է գրաւոր կերպով, այն է թղթի վրա գրելով իր պատասխանը: Իսկ դէպքով չարժեքներով և արտայայտութեամբ նա այնքան չէ նուազել, ինչպէս հաղորդում էին վերջին լուրերը:

—Բերլինից գրում են, որ Ֆրիդրիխ կայսրը կարգադրեց, որ Վիլհելմ կայսրի համար սուղ պահելը ստիպողական չը դարձնեն Գերմանիայում ազատամիտ կարգադրութեան նպատակն է ճնշում չը գործել գերմանական դաշնակցական պետութիւնների զգացմունքների վրա:

—Ֆրիդրիխ կայսրը դիմեց բժիշկ Մորրէլ Մակնէլին և խնդրեց շարունակել իր բժշկութիւնը: Կրտուզէ, Վագներ, Բերդման և միւս մի քանի բժիշկներ այլ ևս այն բժիշկների թւում չեն, որոնք բժշկում էին կայսրին:

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

«Revue de l'Orient» լրագրում կարդում ենք, որ Կ. Պոլսի հայոց Միացեալ Ղնկերութիւնների օգնութիւն տուած պարահանդիսի ժամանակ Կ. Պոլսի Ֆրանսիական թատրոնի օրկէստը պիտի ածէր հայոց յայտնի երաժիշտ Տիգրան Զուլաւանի նոր երաժշտական հեղինակութիւն, մի «հիմն», որ զրկած է ի պատիւ Սուլթանի: Այդ պարահանդէսը, ինչպէս իմանում ենք թղթակցութիւն-

ներից, որովհետև Սուլթանի հովանավորութեամբ և օսմանեան բանակի ընդհանուր կառավարիչ ֆուս-տըրի նախագահութեամբ:

Բաղարիայում հրատարակվում են այժմ ընդա-մենը 24 լրագիրներ, որոնց 8 հատ Սօֆիայում, իսկ մնացածները Բաղարիայի ուրիշ քաղաքներում, այն է Պլովդիվ (Ֆլորիպոլիս), Վիդին, Բանա, Սիմեոն, Բուսուզ, Զուլա, Վարնա, Տիրնովա, Նիկոպոլի և Կոստանդնուպոլիսում: Մի բաղարի-ական լրագիր էլ հրատարակվում է Կ. Պոլսում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՐԻՑԻՆ, 9 մարտի: Վճարան սառուցից ա-ղաղակից մինչև Ան Երբ:

ՓԱՐԻՉ, 9 մարտի: Գններով Բուլանոն յայտնեց, որ ինքը կը մասնակցի իր համախոհների ընտրո-ղական պայքարին, որովհետև այժմ զինուորա-կան ծառայութեան որ և է տեսակետով իրան կապված չէ համարում: Մարտից հետագայում են, որ Ֆելքս Պիա մերժեց Բուլանոն օգտին ա-ռաջարկված թեկնածութիւնից հրաժարվելու:

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 10 մարտի: Ենթադրութիւն կայ խելագարների ընդեր յանձնել նախնական դա-տարաններին: Չեմսոփոնի զինուորական վերա-բերեալ նախագիծը կը քննվի պետական խորհր-դում մարտի վերջին:

ՓԱՐԻՉ, 10 մարտի: Այսպէս կոչված, ազգային բո-ղոքի մասնագործը հրաժարվեց առաջարկել Բու-լանոն թեկնածութիւնը, որպէս զի կառավարու-թեանը զրկի զհեղափոխական զինուոր միջոցներ ձեռք առնելու պատրուակից: Չինուորական ընդի-յան ձեռնարկով Բուլանոն զործի համար կը դու-մարկի ոչ աւելի շուտ, քան շարքով կամ երկու-շարքի օր:

ՎԻԵՆՆԱ, 10 մարտի: «Corresp. d'Est» լրագրին հաղորդում են Բեռլինից, որ իբր թէ այնտեղ տեղի է ունեցել Ռուսաստանին առ-նայատ փոփոխութիւն, ուստայ լրագիրների այն յօդուածների պատճառով, որոնք վերաբերում են Աւստրիային: Այդ հաղորդագրութեան հեղինակը ասում է որ Պետերբուրգում զուր են յոյս դնում նոր կայսրի և Բիսմարկի մէջ ծագած տարաձայ-նութեան վրա: Կանցլերը ցանկանում է, որ Ռու-սաստանը բացատրութեան մէջ մանի Աւստրիա-յի հետ, ասի թէ ինչ է կամենում, և միայն այն ժամանակ նա կարող կը լինի յորդորել Աւս-տրիային ընդունելու Ռուսայ առաջարկութիւն-ները:

ԼՕՆԻՍՆ, 10 մարտի: Թագուհին ճանապարհ ընկաւ դէպի Իտալիա:

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 10 մարտի: Լուրերին նայելով, սենատը վճռել է, որ երդուեալ հաւատարմատա-րները պարտաւոր են բնակվել այն դատա-տանական պալատների շրջանում, ուր նրանք հաշտւում են, և կարող են իրանց բնակութեան համար ընտրել ոչ միայն նահանգական, այլ և գաւառական քաղաքներ: Եթէ պալատի շրջանում մտցրած են միայն հաշտարար հիմնարկութիւն-ներ, այդ դէպքում երդուեալ հաւատարմատարները կարող են բնակվել և այդ տեղերում: Երդուեալ հաւատարմատարի չեղեալը, ըստ պահանջման նա-հանգական դատարանի, կենթարկէ սուղիչ քննու-թեան:

ՓԱՐԻՉ, 10 մարտի: Չինուորական ընդի յան-նաժողովը գններով Բուլանոն զործի համար արդէն կազմակերպված է: Կը նախագահէ գնե-րալ Ֆելքսը: Գններով Բուլանոն պետք է ներ-կայանայ յանձնագործին վաղը:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՄՆԵՐԱՆՈՑ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆՑԻ

(Կուրիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը

ԲՈՒԿԻՆՎԱԿԻ—10—11 Ժ. ներքին, երեսայոց և կանանց ց.

ԿԻՆ—ԲԺԻԶԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 Ժ. կանանց և երեսայոց ց.

ԲԵՆԿԻՎԱԿԻ—11—12 Ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և առաւմների ց.

ՍՈՐՈՔԵՎ—11—12 Ժ. առաւմարոց Ժ.

Ա. ԳՈՒՐԿՈ—12—1 Ժ. աչքի, ներքին և մանկական ց.

ԱՐՏԵՄԵՎ—12—1 Ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երեսայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՉԱԵՎԱԿԻ—5—7 Ժ. ջղային ց. և էլէկտրօ-տերապիա.

ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 Ժ. ներքին և երեսայոց ց.

Հիւանդանոցում է մանկաբարձուհի Մօզեր:

Վճար—50 կօ: Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտա-կան անկողիններ.

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԿԻՆՎԱԿԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՈՆ-ՍԻՏՈՐԻԱՑԻ Ատենի մէջ նշանակված է աճուրդ 21-ին մարտի սոյն ամի, ա-ռանց կրկնաձուրդի, կապալով տալու համար էլ միջնապատկան երկու այգիները Օր-թաճալայի և Վերայի: Անդամ կոնսիստորիայի ցարութիւն աւագ քահանայ Սուգանա-ճնանց:

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, մարտի 17-ին, ԳԱԼԻԱ (LA GAULE) շոգենուր, նաւապետ ԳԱՐ-ՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթունից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պետք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթունում լէմպոլլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Ար-ճունի գալլերէում, № 103.

4—4

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԿԻՆ ԳՆՈՎ:

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱԽՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏՈՐԻԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԵՐԱ կոչված թաղում:

27—50

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԹԻՖԼԻՍԻ ՄԱԳԻՍՏԱՆ մէջ ներկայ մարտ ամսի 14-ին և նոյն ամսի հետեւեալ օրերում կը ծախվին աճուրդով զանազան արտասահմանեան ապրանքներ, ինչպէս օրինակ. գործուածքներ, խմիչքներ, ապակիներ և այլն:

1—1

Տափի-թաղի (Քամոյեանց) եկեղեցու յարգոյ ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցու երեցիկութանի, հաշուատեսների և ծխական զարոյի հոգաբարձուների ընտ-րութեանը, որ տեղի է ունենալու կիրակի, ամսիս 13-ին, ժամը 11-ին պատարագից յի-տոյ: Վերատեսուչ Թիֆլիսի և Հաւաքարի եկեղեցիների բարեկարգութեան Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց:

1—1

ԽՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՐ

Մի անձն, որ մի շատ հասարակ միջոցով ազատվեց խլութիւնից, որ տեւեց 23 տարի, պատրաստ է անվարձ ուղարկել այդ միջոցի նկարագրութիւնը բոլոր ցանկացող-ներին: Հասցէն. Парижъ (Франція) 4. Rue Drouot, Dr. Nicolson, Paris.

1—5

ՎԵՌՆԵՃԻ ԶՄՈՒՈՒ ԵՒ ՓԱՅԼԱՆԵՐԿԻ

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մրանով պատիւ ունի յայտնելու պ. պ. առեւտրականներին և վեռնիճի (յակ), դմուռի և փայլաների (պոլիտուրա) գործածողներին, որ ունի յիշեալ ապրանքների բոլոր տեսակները, որոնք յետ չեն մնում միւս գործարաններից, ինչպէս իրանց մատչե-լի գնով: այնպէս էլ իրանց լաւ յատկութեամբ: Պատուէրները ընդունվում են կատար-վում են անմիջապէս:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՐՍԵԼ ԵՒ ԿԱՊԵԼ ԿԱՍԱՐՎՈՒՄ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ԽՆԱՄԻՈՒ ԳՈՐԾԱ-ՐԱՆԱՊԵՏԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՑ: Մանրամասն պայմանները նշանակ-ված են պրէյս-կուրանտի մէջ, որը տրվում է ուղարկվում է ձրեալ: Օտարաքաղա-քացիների պահանջները կատարվում են ամենայն ճշգրտութեամբ և անյապար: Գործարանը և պահեստը գտնվում են Նիկոլայեւսկի փողոցի վրա, տուն Զիթախանի, № 25:

Հասցէն. Тифлисъ, Самуи́лу Леонте́вичу Ходорскому.

14—20 (Ծ)



ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Այդ էլիկսիրը հնարել է 1373 թ. ին վանահայր

ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ:

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է առաւմները փչանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդե-րը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաս-տում են զարձաւ ԱՍՄՆԱՓՈՇԻ և ՊԱՍՍԱ առաւմներ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բե-րել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագաղիններում:

ԳԼԽԱՌՈՐ ԱԳԵՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

5—30 (Ծ)

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ

է կազմում այն դժբաղդների համար, որոնք զոհ են եղել անարդարականութեան, բժշկա-պետ ՌԵՏԱՌԻ ԳԻՐԸ

«ԻՆՔՆԱՊԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ»

Ռուսաց հրատարակութիւն, 3 պատկերնե-րով, գինը 1 րուբլի:

Թող ամեն մարդ, որ տանջվում է սարսա-փիլի արտի հետեւնեցիներից, կարգայ այդ գիրքը. նա ազատեց շատերին հաստատ կո-րուստից: Մի րուբլի ստանալուց յետոյ լէյպցիգի Բ. Ֆ. Բերէյի հրատարակողի մա-գաղինը ուղարկվում է գիրքը ցանկացողնե-րին: Հասցէն. Германия (R. F. Bierer's Verlags-Magazin Leipzig). (Ծ) 8—50

Въ редакціи газеты „МШАКЪ“ прода-ются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oeko- nomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien- ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über- setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить бро- шюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschakъ“. (Ծ)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԻՖ-ԼԻՍԻ ԳՈՐԾՈՑՈՒՄ վաճառվում են ամեն տեսակ թէ մրգատու և թէ զարդի բոցներ: Պահանջման ժամանակ պրէյսկուրանները անվարձ են ուղարկվում:

10—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ՁԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ“

Կ Ո Վ Կ Ա Ս Ի Հ Ա Մ Ա Ր

Գինն է 30 կոպէկ

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և հետեւեալ տեղերում. Թիֆլիսում՝ Կենա-րօնական և ուրիշ գրավաճառանոցներում, Երեւանում՝ Կ. Գառամանի խանութում, ԲԱԳ-ԻՈՒՄ՝ Թաւայեանի և Շիրազեանի խանութներում, ԳԱՆՁԱԿՈՍԻՄ՝ Աղայեանի խանութում, ՇՈՒՇԻ՝ Գաղեան եղբայրների գրավաճառանոցում, ՆՈՒԻ՝ Ուսուցիչ Ն. Գալթեանի մօտ, ԱԳՈՒԼԻՄ՝ Ուսուցիչ Լևոն Թաղեանի մօտ, ԱԼԷԳԱՆԻՄՈՒՎ՝ Վեհապետանի խանու-թում: Օտարաքաղաքացիք այդ գիրքը ստանալու համար պետք է դիմեն հետեւեալ հասցեով. Тифлисъ, X. Малумянцу, въ редакцію Мшакъ.

8—10